ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2009

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

«ՀՀ պետական պարտքի 2009թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը» հրատարակվել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել և թարգմանել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Ա. Մարությանը, Ս. Մկրտչյանը, Ա. Համբարձումյանը, Ա. Եգանյանը, Ս. Խանվելյանը, Գ. Վարդապետյանը, Ք. Խաչատրյանը և Ս. Իսրայելյանը:

ՀՀ պետական պարտքը 2003-2009թթ.

	31.12.2003	30.06.2004	31.12.2004	30.06.2005	31.12.2005	30.06.2006	31.12.2006	30.06.2007	31.12.2007	30.06.2008	31.12.2008	30.06.2009
	մլրդ դրամ											
Պետական պարտք	664.4	617.2	621.1	552.9	546.1	542.4	508.9	490.5	516.2	554.4	584.6	989.6
այդ թվում՝												
արտաքին պարտք	621.3	572.2	574.7	493.0	494.8	487.2	438.2	431.6	440.8	469.2	483.7	876.2
ներքին պարտք	43.1	45.0	46.4	59.9	51.3	55.2	70.7	58.9	75.4	85.2	100.9	113.4
որից												
պետական արժեթղթեր *	43.1	45.0	46.4	59.9	51.3	55.2	70.7	58.9	66.3	76.1	92.3	104.1

	31.12.2003	30.06.2004	31.12.2004	30.06.2005	31.12.2005	30.06.2006	31.12.2006	30.06.2007	31.12.2007	30.06.2008	31.12.2008	30.06.2009
	մլն ԱՄՆ դոլար											
Պետական պարտք	1,173.9	1,154.7	1,278.4	1,250.0	1,213.2	1,295.2	1,400.1	1,438.5	1,696.9	1,831.7	1,906.0	2,748.5
այդ թվում՝												
արտաքին պարտք	1,097.7	1,070.5	1,182.9	1,114.5	1,099.2	1,163.4	1,205.6	1,265.8	1,448.9	1,550.3	1,577.1	2,433.5
ներքին պարտք	76.2	84.2	95.5	135.5	114.0	131.8	194.5	172.7	247.9	281.4	328.9	315.0
որից												
պետական արժեթղթեր *	76.2	84.2	95.5	135.5	114.0	131.8	194.5	172.7	217.9	251.4	300.9	289.0

ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեքը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	566.00	534.49	485.84	442.34	450.19	418.79	363.50	340.95	304.22	302.65	306.73	360.06

* 2006թ. ներքին պետական պարտքի մեջ ներառված է ՀՀ ԿԲ վերակապիտալիզացիայի նպատակով տրամադրված պարտատոմսերը՝ 12.7 մլրդ դրամ

ՀՀ արտաքին և ներքին պետական պարտքի փոխարկումը կատարվել է ելնելով համապատասխան ժամանակաշրջանի վերջի դրությամբ արժութային շուկայում ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքից՝ աղբյուր ՀՀ կենտրոնական բանկ:

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Օգտագործված հապավումներ

ՆՊՊ-ներքին պետական պարտք

ՊՊ- պետական պարտատոմսեր

ՊԿՊ-պետական կարճաժամկետ պարտատոմսեր

ՄԺՊ-միջին ժամկետայնության պատատոմսեր

ԵՊ-երկարաժամկետ պարտատոմսեր

ԽԱՊ-խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր

ԳՊ-Գանձապետական պահառու

2009 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

- ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 113,428.5 մլն. դրամ, որից պետական կարճաժամկետ պարտատոմսեր՝ 36,274.49 մլն. դրամ, միջին ժամկետայնության պարտատոմսեր՝ 43,262.0 մլն. դրամ, երկարաժամկետ պարտատոմսեր՝ 24,331.56 մլն. դրամ, խնայողական պարտատոմսեր՝ 198.92 մլն. դրամ, ՀՀ ռեզիդենտից ստացված վարկ՝ 9,361.56 մլն. դրամ:
- պետական պարտատոմսերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը կազմել է 8,646.31 մլն. դրամ,
- ներքին պետական պարտքի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 10.0271 %,
- ներքին պետական պարտքի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1451 օր (ՊԿՊ-եր՝ 207 օր, ՄԺՊ-եր՝ 797 օր, ԵՊ-եր՝ 4477օր և ԽԱՊ-եր՝ 275 օր):

2009 թվականի մարտ ամսից սկսած ուղենշային պարտատոմսերի համար յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ հաշվարկվում է միջին կշռված վճարային հոսքերի տևողությունը՝ դյուրացիան (Duration): Դյուրացիան ֆիքսված տոկոսադրույքով արժեկտրոնային պարտատոմսերի համար, որպես ժամկետայնություն բնութագրող մեծություն է, որը կախված է արժեկտրոնի ֆիքսված տոկոսադրույքից, պարտատոմսի ժամկետայնությունից և շուկայական տոկոսադրույքից: Որպես շուկայական տոկոսադրույք վերցվում է մեկ տարի մարման ժամկետայնություն ունեցող ՊԿՊ-երի վերջին երեք տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերությունը, քանի որ երկրորդային շուկայի շրջանառության ծավալները բավարար չեն շուկայական տոկոսադրույք որոշելու համար:

Աղյուսակ 1

2009 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները

	30.06.2008թ.	31.12.2008թ.	30.06.2009թ.
Ներքին պետական պարտքը (մլն. դրամ), այդ թվում՝	**85,157.6**	**100,893.2**	**113,428.5**
Պետական պարտատոմսեր անվանական արժեքով(մլն. դրամ), որից՝	***76,078.1***	***92,304.8***	***104,067.0***
կարճաժամկետ պարտատոմսեր	5,627.00	30,133.50	36,274.49
միջին ժամկետ. պարտատոմսեր	44,769.14	36,873.63	43,262.00
երկարաժամկետ պարտատոմսեր	25,430.19	24,985.82	24,331.56
խնայողական պարտատոմսեր	251.79	311.84	198.92

*ՀՀ ռեզիդենտից ստացված վարկ (մլն.դրամ) **	*9,079.5*	*8,588.44*	*9,361.56*
ՆՊՊ-ի ժամկետայնություն (օր), որից՝	**2005**	**1535**	**1451**
կարճաժամկետ պարտատոմսեր	114	117	207
միջին ժամկետ. ժարտատոմսեր	894	799	797
երկարաժամկետ պարտատոմսեր	4396	4345	4477
խնայողական պարտատոմսեր	229	243	275
ՆՊՊ-ի եկամտաբերությունը (%) որից՝	**7.8783**	**8.3566**	**10.0271**
կարճաժամկետ պարտատոմսեր	6.3353	8.4986	10.3578
միջին ժամկետ. ժարտատոմսեր	7.0701	7.2735	9.4960
երկարաժամկետ պարտատոմսեր	9.6415	9.7831	10.4804
խնայողական պարտատոմսեր	7.9834	8.4250	9.7788
Դյուրացիա (տարի)			**3.6430**

Գծապատկեր 1

2009 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքի կառուցվածքը



ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տեղի են ունեցել ուղենշային պարտատոմսերի 17 տեղաբաշխման աճուրդներ, որից 13-ը՝ ՄԺՊ-ի, 4-ը՝ ԵՊ-ի: Տեղաբաշխման ենթակա ծավալը կազմել է 21.7 մլրդ. դրամ, որից տեղաբաշխվել են 17.63 մլրդ. դրամ ծավալով պարտատոմսեր: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել ՊԿՊ-երի 36 թողարկում՝ 39.5 մլրդ. դրամ ծավալով, որից տեղաբաշխվել է 33.8 մլրդ. դրամը և ԽԱՊ-երի 12 թողարկում՝ 600.0 մլն. դրամ ծավալով, որից տեղաբաշխվել է 100.8 մլն. դրամը: Պետական պարտատոմսերի

* վարկը ստացվել է ԱՄՆ դոլարով՝ 30.0 մլն դոլար ծավալով: 30.06.09թ. դրությամբ պարտքը կազմում է 26.0 մլն դոլար:

տեղաբաշխման ծավալում ՊԿՊ-ը կազմել են 33.8 մլրդ. դրամ (65.6%), ԽԱՊ-ը՝0.1 մլրդ. դրամ (0.2%), ՄԺՊ-ը՝ 15.5 մլրդ. դրամ (30.1%), ԵՊ-ը՝ 2.1 մլրդ. դրամ (4.1%): ՊԿՊ-ի մեկ թողարկման միջին ծավալը կազմել է 1.1 մլրդ. դրամ, ԽԱՊ-ինը՝ 50.0 մլն. դրամ, իսկ ՄԺՊ-ի մեկանգամյա տեղաբաշխման ենթակա միջին ծավալը կազմել է 1.4 մլրդ. դրամ, ԵՊ-ինը՝ 1.0 մլրդ դրամ: Պետական պարտատոմսերի տեղաբաշխման ենթակա ծավալի նկատմամբ պահանջարկը գերազանցել է 1.64 անգամ և կազմել 100.5 մլրդ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում կատարված տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 708 օր, միջին կշռված եկամտաբերությունը՝ 11.67% (տե՛ս աղ. 2): Թողարկման առավելագույն ժամկետայնությունը եղել է 20 տարի, նվազագույնը՝ 13 շաբաթ:

Աղյուսակ 2

2009թ. առաջին կիսամյակում պետական պարտատոմսերի եկամտաբերության և ժամկետայնության ցուցանիշներն ըստ ամիսների

	Նվազագույն եկամտաբերություն (%)	Առավելագույն եկամտաբերություն (%)	Միջին կշռված եկամտաբերություն (%)	Տեղաբաշխման միջին կշռված ժամկետ (օր)
Հունվար	9.0000	10.5000	9.5849	437
Փետրվար	9.1399	10.5000	9.9037	440
Մարտ	10.4500	13.5000	10.7566	496
Ապրիլ	10.6000	13.0000	11.2416	306
Մայիս	10.6990	14.7200	12.3097	582
Հունիս	10.0000	16.3999	13.0782	1407
I կիսամյակ	**9.0000**	**16.3999**	**11.6670**	**708**

Պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի 92.29%-ը (92,723.5 մլն. դրամ) ձևավորվել է գործակալների և դիլերների սեփական միջոցների, 7.71%-ը (7,752.1 մլն. դրամ)՝ ներդրողների հաշվին (որից ԳՊ-ն՝ 0.78%):

Աղյուսակ 3

2009թ. առաջին կիսամյակում շուկայի մասնակիցների ձեռք բերած ՊՊ-երի տեսակարար կշիռները տեղաբաշխման ծավալի մեջ

(տոկոսներով)

	Գործակալներ	Դիլերներ	ԳՊ	Ընդամենը
Հունվար	63.70	34.16	2.14	100.00
Փետրվար	34.95	65.05	-	100.00
Մարտ	3.69	88.80	7.51	100.00
Ապրիլ	40.72	55.6	3.68	100.00
Մայիս	60.18	39.44	0.38	100.00
Հունիս	78.28	21.72	-	100.00
I կիսամյակ	**55.00**	**43.47**	**1.53**	**100.00**

գծապատկեր 2

Պետական պարտատոմսերի շուկայում ներդրողների կառուցվածքը
2009թ. հունիսի 30-ի դրությամբ



Ներդրողների կառուցվածքում ռեզիդենտ այլ ներդրողների տեսակարար կշիռը 2008թ-ի տարեվերջի 7.7%-ի նկատմամբ նվազել է՝ հասնելով 6.0%-ի, իսկ ոչ ռեզիդենտ ներդրողների կշիռը փոփոխություն չի կրել: ՀՀ կենտրոնական բանկի մոտ գտնվող պարտատոմսերի 56.6%-ը (35,219.25 մլրդ. դրամ) կազմում են ռեպո գործառնությունների արդյունքում գրավադրված պարտատոմսերը:

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2009թ. առաջին կիսամյակի ընթացքում երկրորդային շուկայում կատարված գործարքներն ունեն հետևյալ տեսքը՝

- Կատարվել է 804 գործարք, որից
  - միջբանկային շուկայում՝ 545 գործարք
  - ՀՖԲ-ում՝ 50 գործարք
  - ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ 209 գործարք
- Գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 68,431.2 մլն. դրամ, որից
  - առևտրային բանկերի կողմից՝ 47,981.1 մլն. դրամ
  - ՀՖԲ-ում ուղենշային պարտատոմսերով՝ 545.3 մլն. դրամ
  - ԿԲ-ում՝ 19,904.8 մլն. դրամ

Միջբանկային գործարքների ծավալում.

- ՊԿՊ շրջանառության ծավալը կազմել է 8,684.7 մլն. դրամ
- ՄԺՊ շրջանառության ծավալը կազմել է 22,828.3 մլն. դրամ
- ԵՊ շրջանառության ծավալը կազմել է 16,468.1 մլն. դրամ

ՀՖԲ-ի գործարքների ծավալում.

- ՄԺՊ շրջանառության ծավալը կազմել է 457.3 մլն. դրամ
- ԵՊ շրջանառության ծավալը կազմել է 88.0 մլն. դրամ

ՀՀ կենտրոնական բանկի գործարքների ծավալում

- ՊԿՊ շրջանառության ծավալը կազմել է 6,581.9 մլն. դրամ
- ՄԺՊ շրջանառության ծավալը կազմել է 10,380.0 մլն. դրամ
- ԵՊ շրջանառության ծավալը կազմել է 2,942.9 մլն. դրամ

- Կատարված բոլոր գործարքների միջին կշռված եկամտաբերությունը՝ 10.55%,
- Միջին կշռված ժամկետայնությունը՝ 1680 օր,

- Միջին օրական ծավալը՝ 565.6 մլն. դրամ,
- Գործարքների միջին օրական քանակը՝ 7:

Գծապատկեր 3

2009 թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարված գործարքների ծավալներն և եկամտաբերությունն ըստ ամիսների



	Հունվար-09	Փետրվար-09	Մարտ-09	Ապրիլ-09	Մայիս-09	Հունիս-09
ԿԲ-ի կողմից կատ.գործ. ծավալ (մլն.դրամ)				9175.6	7229.2	3500.0
Միջբանկ. գործ. ծավալ (մլն.դրամ)	3088.1	5340.3	6028.9	10375.2	7253.9	16440.0
ԿԲ գործ. եկամտ. %				10.05	11.22	10.03
Միջբանկ. գործ. եկամտ. %	8.86	8.73	8.67	10.08	11.54	12.11

Գծապատկեր 4

2009 թ. առաջին կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործառնություններն ըստ ժամկետայնության



	1-91 օր	92-182օր	183-364 օր	1-3 տարի	3-4 տարի	4-5 տարի	6 և ավել տարի
ԿԲ-ի կողմից կատ.գործ. ծավալ (մլն.դրամ)	50.0	218.9	6,787.2	6,190.4	3,795.7	-	2,862.6
Միջբանկ. գործ. ծավալ (մլն.դրամ)	1,892.2	2,744.2	4,362.7	14,784.9	7,646.3	540.0	16,556.1
ԿԲ գործ. եկամտ. %	9.40	9.21	10.05	10.37	11.14	-	10.93
Միջբանկ. գործ. եկամտ. %	8.35	9.13	10.37	11.36	10.13	9.31	10.69

Գծապատկեր 5

Կատարված գործարքների մեջ ՊԿՊ-ների, ՄԺՊ-ների և ԵՊ-ների տեսակարար կշիռը



Գծապատկեր 6

2009 թ. առաջին կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործարքների եկամտաբերության և ժամկետայնության փոխադարձ կապը



ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ

2009թ. առաջին կիսամյակում Գանձապետական պահառուի կողմից իրականացված գործառնություններն ունեցել են հետևյալ տեսքը.

- մասնակցել է կազմակերպված ԽԱՊ-երի 12 թողարկումներից 11-ին և ՊԿՊ-երի 36 թողարկումներից 12-ին,
- ներդրման ծավալը կազմել է 888.9 մլն դրամ, որից 788.1 մլն ՊԿՊ-եր և 100.8 մլն ԽԱՊ-եր,
- մարվել է 1,034.5 մլն դրամի պարտատոմս, որից 920.0 մլն ՊԿՊ-եր և 114.5 մլն ԽԱՊ-եր,
- թողարկված ՊԿՊ-երի 2.0% ձեռք է բերվել ԳՊ-ի միջոցով (ԳՊ-ի ձեռք բերման առավելագույն ծավալը սահմանվել է թողարկման ծավալի 10%-ի չափով),
- 2009թ. հունիսի 30-ի դրությամբ ընդամենը շրջանառության մեջ է եղել 936.9 մլն. դրամի պարտատոմս, որից 738.0 մլն ՊԿՊ-եր և 198.9 մլն ԽԱՊ-եր (տես գծ. 7),

Գծապատկեր 7

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը 2009թ. հունիսի 30-ի դրությամբ

(մլն դրամ)



- դեպո հաշիվների քանակը կազմել է 786, որոնցից 15-ը բացվել են հաշվետու ժամանակահատվածում (տես գծ. 8),

Գծապատկեր 8

Դեպո հաշիվների դինամիկան 2009թ. առաջին կիսամյակի ընթացքում



- շրջանառության մեջ եղած պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 157 օր, որտեղ ՊԿՊ-երի համար այն կազմել է 125 օր, իսկ ԽԱՊ-երի համար՝ 275,
- մեկ ներդրողի կողմից ներդրման միջին ծավալը կազմել է 20.2 մլն. դրամ, որտեղ ՊԿՊ-երի գծով այն կազմել է 197.0 մլն դրամ, իսկ ԽԱՊ-երի գծով՝ 2.5 մլն դրամ,
- ներկայացված հայտերում ներդրման միջին ծավալը կազմել է 13.1 մլն. դրամ, որտեղ ՊԿՊ-երի գծով այն եղել է 56.3 մլն դրամ, իսկ ԽԱՊ-երի գծով՝ 1.9 մլն դրամ:

Աղյուսակ 4

ԳՊ-ի կողմից 2009թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ՊԿՊ-երով կատարված գործառնությունները

(մլն դրամ)

Ժամկետը	Մարում	Սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշխում	Տեղաբաշխվածի կշիռը թողարկման ծավալի մեջ (%)	Թողարկումների քանակը	Մեկ թողարկման ներդրման միջին ծավալը
1-13 շաբաթ	378.5	8.7	387.2	337.1	6.7	5	67.4
14-26 շաբաթ	232.3	8.5	240.8	218.9	3.6	6	36.5
27-39 շաբաթ	89.4	5.6	95.0	-	-	3	-
40-52 շաբաթ	184.2	12.8	197.0	232.1	0.9	22	10.6
Ընդամենը	884.4	35.6	920.0	788.1	2.0	36	21.9

Աղյուսակ 5

ԳՊ-ի կողմից 2009թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ԽԱՊ-երով կատարված գործառնությունները

(մլն դրամ)

Ժամկետը	Մարում	Արժեկտրոնի սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշխում	Տեղաբաշխվածի կշիռը թողարկման ծավալի մեջ (%)	Թողարկումների քանակը	Մեկ թողարկման ներդրման միջին ծավալը
Մինչև 1 տարի	79.6	2.2	81.8	51.7	25.9	4	12.9
1 - 2 տարի	134.1	9.3	143.4	24.6	12.3	4	6.2
2 - 3 տարի	0	1.5	1.5	24.5	12.3	4	6.1
Ընդամենը	213.7	13.0	226.7	100.8	16.8	12	8.4

Գծապատկեր 9

ԳՊ-ի միջոցով շրջանառության մեջ եղած պարտատոմսերի կշիռը 2009թ. հունիսի 30-ի դրությամբ


21%
79%
ԽԱՊ
ՊԿՊ

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2009 թվականի հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 2,433.5 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝

- ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված երաշխիքների գծով արտաքին պարտավորությունները՝ 2,009.3 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր պարտքի 82.6%),
- ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները՝ 424.2 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր պարտքի 17.4%):

2008 թվականի դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի ծավալը աճել է 54.3 տոկոսով կամ 856.4 մլն ԱՄՆ դոլարով: Նշված փաստը պայմանավորված է եղել ինչպես 2009թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարված գործառնություններով, այնպես էլ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ արտաքին պետական պարտքի զամբյուղը ներկայացնող հիմնական արտարժույթների փոխարժեքների փոփոխությամբ[1]:

Գծապատկեր 10

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ տրամադրման արժույթի 2009թ. հունիսի 30-ի դրությամբ



2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքի գծով կատարվել են հետևյալ գործառնությունները.

[1] 31.12.2008թ. դրությամբ 1 SDR=1.54027 USD, 1 EUR= 1.4429 USD
30.06.2009թ. դրությամբ 1 SDR=1.55223 USD, 1 EUR =1.4134 USD:

Աղյուսակ 6

ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների ստացումները 2009թ. առաջին կիսամյակի ընթացքում

(մլն ԱՄՆ դոլար)

	Ստացում	Սպասարկում		
		ընդամենը	այդ թվում	
			մարում	տոկոսավճար
Ընդամենը	***866.26***	***27.77***	***21.11***	***6.66***
այդ թվում՝				
I. ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով արտաքին պարտավորություններ	**597.00**	**16.17**	**10.41**	**5.76**
որից՝				
1. Միջազգային կազմակերպություններ	*43.07*	*11.47*	*7.42*	*4.05*
ա) Համաշխարհային Բանկ	31.41	10.61	7.06	3.56
որից՝				
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	31.41	10.10	6.62	3.47
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	-	0.52	0.43	0.08
բ) Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ	1.82	0.57	0.36	0.21
գ) Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) Միջազգային Զարգացման Հիմնադրամ	2.00	0.27	-	0.27
դ) Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	-	-	-	-
ե) Ասիական Զարգացման Բանկ	7.84	0.02	-	0.02
2. Օտարերկրյա պետություններ	*553.93*	*4.69*	*2.99*	*1.71*
ա) ԱՄՆ	-	1.59	1.15	0.43
բ) Գերմանիա (KfW)	3.96	0.82	0.37	0.45
գ) Ֆրանսիա	-	0.07	0.06	0.02
դ) Ճապոնիա	49.96	1.99	1.41	0.58
ե) Ռուսաստանի Դաշնություն	500.00	0.23	-	0.23
II. ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ	**269.26**	**11.60**	**10.70**	**0.90**
որից՝				
1. Միջազգային կազմակերպություններ	262.92	*11.53*	*10.70*	*0.83*
ա) Արժույթի Միջազգային Հիմնադրամ	237.79	11.53	10.70	0.83
բ) Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	25.13	-	-	-
2. Օտարերկրյա պետություններ	*6.34*	*0.07*	-	*0.07*
ա) Գերմանիա (KfW)	6.34	0.07	-	0.07

2009թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքում արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը կազմել է 67.5%:

2009թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պարտավորությունների 63.5%-ը կազմել են միջազգային կազմակերպություններից ստացված վարկային միջոցները, իսկ մնացած 36.5%-ը՝ օտարերկրյա պետությունների կողմից տրամադրված վարկերը (տես գծապատկեր):

Գծապատկեր 11

ՀՀ վարկատուների կառուցվածքը 2009թ. հունիսի 30-ի դրությամբ



2009թ. առաջին կիսամյակի ընթացքում ստորագրվել են 8 նոր վարկային համաձայնագրեր՝

- Զարգացման Միջազգային Ընկերակցության հետ 4 վարկային համաձայնագրեր (39.6 մլն SDR ընդհանուր գումարով, վարկառու՝ Հայաստանի Հանրապետություն),
- Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի հետ 1 վարկային համաձայնագիր (50.0 մլն ԱՄՆ դոլար գումարով, վարկառու՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ),
- Արժույթի Միջազգային Հիմնադրամի հետ 1 վարկային համաձայնագիր (533.6 մլն SDR գումարով, վարկառու՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն (202.4 մլն SDR) և կենտրոնական բանկ (331.2 մլն SDR)),
- Գերմանիայի Դաշնային Հանրապետության (KfW) հետ 1 վարկային համաձայնագիր (14.6 մլն Եվրո գումարով, վարկառու՝ Հայաստանի Հանրապետություն),
- Ռուսաստանի Դաշնության հետ 1 վարկային համաձայնագիր (500.0 մլն ԱՄՆ դոլար գումարով, վարկառու՝ Հայաստանի Հանրապետություն):